

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ագրաբային ռեփորտներ երանդիայում.—Աշխատանիքի ներկայացուցիչ կուսակցութեան մի յաղրանակը պարաւենական ընտրութիւններում.—Աւստր-Օւնացարական համապատասխան պարաւենական ընտրութիւններում.—Պրավ. Ենտի.՝ հաղորդագրութիւնները Մակեդոնիայում եւ Ալբանիայում պատահած դավթերի մասին.—Մինհաւրական կրիզիս Բուլղարիայում.—Բ. Սարաֆօվի պատահանը «Zeitschriften» իմրազութեան.—«Daily Chronicle» Միացեալ-Նահանգների դիմումի մասին.—Կիլիկիայի նորընթեր կարողիկոսը Սպանայում.—Բողոքական գոյկժ Տարօնում.—Լուսաւորչական շեհացիներ.—Հայկական ցուցահանդեսը Բերլինում:

Ի՞նչքան և յոռեսես լինի մարդ, բայց զիտելով եւրոպական ազգերի կեանքը որոց, փոքր ի շատէ երկար ժամանակամիջոցում, ակամայ բացականչումէ. Անյունուայնայնիւ այդ կեանքը շարժուում է դէպի առաջ և միայն Արևելքն է թմրած, անշարժ, յետադիմողն. Եւ զարմանալի էլ չէ արդ շարժումը, տեսուք որքան ևանդ, տոկունութիւն և անձնութրութիւն են բանեցնուած Արևմուտքի զաւակները դրած նպատակին հասնելու համար: Եւ որքան իսկն ասած փխուել են բարքերը, չը նայած դեռևս տիրող կազմակերպուած մարդասպանութիւններին կամ պատերազմներին:

Ասորեստանի թագաւորները, իրանց փառքը դարերից գար անմահացնելու համար, պարծանքով արձանադրում էին կոտորած մարդկանց, բանաբարուած կանանց, աւերուած դիւղերի և քաղաքների ահազին թերը, իսկ այժմ միստր Զեմրէրինը, չը նայած որ յաղթող հանդիսացաւ Հարաւային Աֆրիկայում, կարծես, ուզում է արդարանալ աշխարհի առաջ և չեշտում է Անգլիայի ցոյց տուած ներողամտութիւնը դէպի երեկուայ թշնամիները, աշխատում է որ մարդկութիւնը իմանայթէ Անգլիան անյիշաչար է, նա յանձն է առնում միլիոններ տալ—վերականգնեցնելու համար երեկուայ թշնամու աւերուած

աները ու տնտեսութիւնը, ներումն չորհել բոլոր քաղաքական յանցաւորներին...

Չը նայած այն փառաւոր արիումքներին, որոնց արժանացաւ Զեմբերլէնը, Հարաւային-Աֆրիկայում կատարած իր ձանապարհորդութիւնից հայրենիք վերադասնալիս, նա, —երեխ նրա հետ նաև այժմեան պահպանողական կառավարութիւնը, —կարծես յուսախարուել է արիւնալի ճնշումների վրայ հիմնուած քաղաքականութեան խելացի կողմերի մէջ և իրանդացիների նկատմամբ գողծելու տակտիկան հիմնովն փոխուումէ. աշխատում են զնալ Մեծ Շերունու, Գլագուանի շաւզով: Նոյն այն պահպանողականները, և Գլագուանից բաժանուած Զեմբերլէնը իր համախոն ունիօնիսանների հետ, որոնք մի քանի ժամանակ առաջ իրանդիայի նկատմամբ չէին ուղղում խաղաղ և հաշտ միջոցների գիմել և հաւատացած էին բեպրեսսալիանների փրկարար զօրութեան մէջ, այժմ՝ առաջարկուում են իրանդացիներին այն, ինչի համար նրանց հարիւր տարի տանջուում էին: Անզիսոն ընդունում է ազգարային բեփօրմների մի այնպիսի ծրագիր որ իրանդիայի վաղուցուայ տենչանքն էր: Եւ բաւական էր մի այդպիսի արդար քայլ երեկուայ ճնշողի կողմից, որ անհետանայ դարաւոր քէնն ու սիր իրանդացիների ազնիւ սրտերից: Քաղաքական յանցաւորները իրանդիայում արձակուած են, ուրախութեան ողին սկսել է սաւառնել չարատանչ ու ամայացած այդ կանոչ կղզու վրայ: Խաղաղութեան և հաշտութեան ճանապարհով Սնդիհան այժմ անուն է այն, ինչ որ անզօր էին կատարել բանտը, հալածանը, տանջանքը...

Սյդ հողատիրական նշանաւոր բեփօրմների օրինագիծը հիմնուած է մի քանի ամիս առաջ իրանդիայի մայրաքաղաք Դուրլինուամ փերսերների և լինոլորդերիներկալացուցիչների ժողովում մշակուած համաձայնութեան վրայ: Իրանդական գործերի մինիստր Ուինստոնի բիլլը ազգարային բեփօրմների մասին իրանդիայում՝ արդէն կարդացուել է անզիսական պարլամենտում և ընդհանրապէս լաւ /տպաւորութիւն է թողել թէ իրանդական պարագլուխների և թէ ազատական կուսակցութեան վրայ: Սյդ օրինագծով իրանդացի փերմերները կամ հողի կապահուունները, որ նոյնն է թէ հողի մշակողները, կառավարութեան օժանդակութեամբ յետ են զնելու կալուածատէրերից կամ լենդլորդերից իրանց հողաբաժինները և դառնալու են կատարելապէս սեպհականատէրեր: Ալ խօսքերով, իրանդիայում կատարուելու է այն, ինչ որ Ալէքսանդր Ա-դը ճորտերի ազա-

տութիւնից յետոյ արաւ ոռուս գիւղացիների նկատմամբ \*), Եւ կառավարութեան այդ նպաստը հաւասար է մի միլիարդ բուր-լու... իսկ ինչ նստեց Անգլիային նրա պատերազմը բօքրների դէմ. վերջը քանի տասնեակ միլիոններ ստիպուած եղաւ նա տալ յազթուած թշնամուն։ Անկասկած այդ միլիոնները որ ալժմ տրում են ֆերմերներին, տարիների ընթացքում վերա-դարձնուելու են գաճարանին, կորած չեն Եւ դրա փոխարէն իր-լանդական երկիրնից ընդ միշտ ազատուելը ինչ անգնահատելի բարիք է։ Անգլիայի համար!

Ի հարկէ ազրարային բեֆօրմեներից յետոյ իրլանդացիների՝ ինքնավարութեան (հօմրուլ) և կաթոլիկ համալսարանի պա-հանջները կը կատարուեն շուտով, մանաւանդ որ Անգլ-իայի մէջ օրէցօր աճում է և զօրելզանում մի կուսակցու-թիւն որ չի ճանաչում անարդարութիւն։ Մեր խօսքը ազատա-կանների մասին չէ, որոնք վերջերում մի քանի տեղ աջողացը-րին ընտրել իրանց կուսակցութեան մարդկանց։ Այդ յազթու-թիւններից շատ աւելի նշանաւորն էր՝ աշխատանքի ներկայա-ցուցիչ կուսակցութեան պարագլուխներից մէկի, Կրուկսի, ընտ-րութիւնը. Նա ստացաւ 8,687 ձայն, մինչդեռ նրա հակառակորդ պահպանողականը 5,458 ձայն...

Այս ընտրութիւնը մի նշանաւոր պատմական երեսյթ է. դա նշանակում է որ անգլիական պարլամենտի մէջ, հին պահ-պանողական, ազատական և իրլանդական կուսակցութիւննե-րի կողքին, ծլում է ազատական կուսակցութեան ամենաձախա-կողմեան ճիւղաւորութեան բողբոջը, որին պատկանում է ապա-գան...

Հաշտութեան ողին սկսել է տիրապետել նաև աւստրիա-կան պարլամենտի պարապմունքներում. չեխերն և գերմանա-ցինները երկարատև ուսուր պայքարից և ազմկալի օրստրուկցիանե-րից յետոյ եկել են այն եղրակացութեան որ «օրստրուկցիան պարլամենտարիզմի բացառումն է» և չի հասցնում նպատակին։ Եւ մինիստր-նախագահ Կեօրքէրը, ճարպիկ լարախաղացի նման, դիտէ հաւասարակշուութիւն պահպանել. նրան աջողուեց ուն-դարսիկան մինիստր-նախագահ Կօլօման Սելլիի հետ համաձայ-նութեան յանդել։ Անցեալ տարուայ մեր մի տեսութեան մէջ (№ 11) մենք աւելի հանգամանորէն բացատրեցինք այդ երկմաս պետութեան համաձայնութեան կամ «առուպլեախի» մասին, որ իւ-րաքանչիւր 10 տարին մի անգամ պէտք է նորոգուի, ստանալով վիէննայի և Բուգապեշտի ազգային ժողովների հաւանութիւնը.

\* ) Համեմատիր այդ հարցի մասին մեր Արտաքին Տես. 1901 թ., № 3-ում:

ինչպէս յայտնի է, 1897 թւականից դեսը այդ համաձայնութիւնը չեն կարողացել կայացնել: Այժմ բոլոր հանգամանքներից երեսում է որ վերջապէս աջողություն է երկրագործական Ունգարիայի և արդիւնագործական Աւստրիայի տնտեսական յարաբերութիւնների մէջ որոշ համաձայնութիւն ստեղծնէ: Այդ բանին յայտնի չափով նպաստեց ի հարկէ Գերմանիայի ուժմաքսային նոր տարիին երբ ընդունուելը: Ունգարական կալուածատէրերը և աւստրիական գործարանատէրերը գոհ են երեսում այդ առողջեանի հիման վրայ առաջ գալիք մաքսային տարիին յաւելումներից, թէեւ, ինչպէս գժուար չէ եզրակացնել թէ արցօրի և թէ աւստրիական բանուորական կուսակցութեան ներկայացուցիչ պատգամաւորների ճառերից բայխսրատում (օր. Դ-ր-էլլին-բերգի) — Աւստրիայի աշխատող դասակարդը այնքան էլ գոհ չէ լինելու համաձայնութեան պայմաններից:

Այժմ եթէ մեր ուշագրութիւնը Աւստրօ-Ունգարիայից գարձնենք Բալկանիան թերակղու վրայ կը տեսնենք որ այդտեղ խաղաղութիւնը և հաշտութիւնը ոչ միայն հեռու են վերականգնուելուց, այլ և հրդեհի նշաններ են երեսում, արեան վրաակներ են հոսում... Սակայն աւելի պերճախօս են ներկայ հանգամանքներում բոլոր թերթերում տալուած վերջին պաշտօնական հաղորդագրութիւնները որ առաջ ենք բերում այստեղ:

— „Правительственныи Вѣстникъ“ -ում մարտի 18-ին տպագրուած է Հիւալիի առևաց հիւպատուի գեկուցումից հետեւալ քաղուածքները. — Հիւպատոսութիւնը պաշտօնապէս հաղորդեց տեղական քրիստոնեաններին, որ Կայսերական կառավարութիւնը խստիւ դատապարտում է կօմիտետների դործունէութեան ձեր. նոյնպիսի յայտարարութիւն արուած է և կօմիտետների անդամներին, որոնց առաջարկուեց դադարեցնել դատապարտելի գործունէութիւնը և չը խանգարել պետութիւնների առաջարկած բարեկանութեամբ իրականացնելուն: Շարժման ղեկավարները մեծ գժոհութեամբ ընդունեցին այդ յայտարարութիւնը, որովհետեւ նրանք բաւարար չեն համարում բարեկանորոգումները և դանկանում են ինքնավարութիւն մացնել երեք վիլայէթներում: Մօս օրերս կօմիտետները մի լիազօր ուղարկեցին հիւպատոսարանին յայտնելու, թէ զրանք անհնարին են համարում արձակել հրասակախմբերը, մինչև որ բարեկանորոգումները չիրականանան և նպատակայարմար դառնան: Կօմիտետների ղեկավարները աշխատում են չը տարածել սուլթանի չնորհած ներման լուրը և տեղեկութիւններ թ. Դրան ընդունած այն միջոցների մասին, որոնց նպատակն է քրիստոնեանների վիճակը բարուրել:

Հրոսակախմբերի գործունէութիւնը չէ դադարել. նրանց և թիւրքական զօրքերի մէջ յաճախ տեղի են ունենում արիւնահեղ ընդհարումներ: Շատ անգամ զօրքերին օգնում են բաշխողուկները, սակայն թիւրքերը խաղաղ բնակիչների վրայ ըրունաւթիւն չեն գործ գնում: Վերջին ժամանակներս շատ յաճախ քաղաքական սպանութիւններ են կատարւում, որոնց զլիաւոր զոհերն են սերբ ուսուցիչներն ու քահանաները, որոնք համոզում են համազիւղացիներին չը միանալ հրոսակախմբերի հետ: Վերջին ժամանակներս կօմիտեանների գործունէութիւնը զգալի չափով ուժեղացել է: Այդ փաստը նկատուեց հէնց այն ժամանակ, երբ Բիտոլի եկաւ բուլղարական վաճառականական գործակալութեան կառավարիչ: Նրա գալուստը տարածեց Բուլղարիայի համար աննպաստ այն լուրը, թէ իշխանութիւնը մասնակից է կօմիտեանների գործունէութեանը:

Թիւրք կառավարութիւնը շարունակում է եռանդուն կերպով իրականացնել պետութիւնների առաջարկած բարենորոգումները: Ներման հետ միասին Սալօնիկի վիլայէթի ֆինանսների տեսչին հրամայուած է կազմել մակեդոնական երկը վիլայէթների բիւջէտի նախագիծը: Երկիրը խաղաղացնելու համար մեծ օգնութիւն է ցոյց տալիս Բիտոլի գեներալ-նահանգապետ Ալի-Ռիզա-փաշան:

— Ուսկիւրի ոռուսաց հիւպատոսի հեռագիրը մարտի 14-ին, «Կոսոօվի վիլայէթում սաստկանում է խաճակութիւնը. Կօնչանում և Խշտիրում կան շատ խմբեր, որոնց անդամների թիւը հասնում է 100-ի և աւելի՝ ուսուցիչներից և քաղաքացիներից բարկացած: Մտադրութիւն կայ օդը ցնդեցնել Խշտիրի զօրանոցները և ընդհանատել երկաթուղային ու հեռագրական հաղորդակցութիւնը: Բուլղարիայից սպասում են շատ սպաներ: Մահուան սպանալիքով ստիպում են գիւղացիներին՝ օգնել հրոսակախմբերին, զէնք և փող տալ պաշարեղէն պատրաստել և զէնք ընդունել կօմիտեանները խնամքով ծածկում են ժողովրդից հիւպատոսարանի այն յայտարարութիւնը, թէ Կայսերական կառավարութիւնը հաւանութիւն չէ տալիս կօմիտեանների գործունէութեանը: Նրանք մինչև անգամ աշխատում են համոզել տեղացիներին, թէ ամեն ինչ կատարում է Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Մարտի 11-ին Սօկոլարցի զիւղից մի պատղամաւորութիւն եկաւ. հիւպատոսարան և ինսպրեց յայտնել, թէ արդեօք ձիչտ է, որ շարժումը Ռուսաստանի հրամանով է սկսուել: Այդ պատղամաւորութիւնը ասաց, որ ժողովուրդը թէն չէ համակրում: կօմիտեանների գործունէութիւնը, բայց պատղամաստ է գնալ, ուր որ կը հրամայէ Ռուսաստանը.

ինդրում են միայն կանաց ու երեխաներին ապաստարան տար Այդ փասով ակներև ապացոյց է, որ ներկայ շարժումը արհեստական է. դրութեանը սուր կերպարանք տալու համար կօմիտեաները թիւրքերին սարսափելի բռնութիւնների են ենթարկում:

Կօմիտեաները ամենն կերպ աշխատում են զարթեցնել թիւրքերի ընդհանուր թշնամութիւնը և գրգել նրանց կոտորելու ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութիւնը:

—Մարտի 22 հրատարակուած է հեաևեալ կառավարչական հաղորդագրութիւնը: «Հէնց որ Կ. Պօլսում տեղեկութիւն ըստացուեց արնառուաների յանգուցն յարձակման մասին Միարօվիցայի վրայ, Կ. Պօլսի ոռուաց գեսպանը չը յապաղեց մեծ վիզիրի ուշագրութիւնը զարձնել՝ արնառուաներին խաղաղյորդորներով հնազանդութեան բերելու Բ. Դրան արած ջանքերի փորձով ապացուցուած անաջողութիւնը և ապստամբներին պատմելու ու քրիստոնեայ ազգաբնակութիւնն ապահովութիւնը երաշխաւորելու համար անյապաղ եռանգուն միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտութիւնը Ֆէրիդ-փաշան շտապեց հաւատացնել Զինօվիեին, որ թիւրքաց կառավարութիւնը գիտակցելով իր վրայ դրած պարտաւորութիւնը՝ կը գործադրէ իր արամապրութեան տակ գտնուած բոլոր միջոցները յուզմունքին վերջ տալու և հանգստութիւնը վերականգնելու համար: Այդ միջոցին Կ. Պօլսում հեռագիր սուսցուեց, որ աեղեկացնում էր արնառուական նոր փանատիկոսութեան մասին, որին զո՞ն զարձաւ Միարօվիցայի ոռուաց հիւապատոսը: Խսկոյն և եթ՝ այդ վատայի տեղեկութիւնը ստանալուց յետոյ՝ սուլթանը հեռագրով յանձնարարեց Պետերբուրգի օսմանեան ներկայացուցչին յայտնել կայսերական կառավարութեանը խորին ցաւակցութիւն Շէրբինայի կեանքի դէմ արած փորձի առիթով և միաժամանակ ուղարկեց Զինօվիեի մօտ մեծ-վիզիրին, որը վկայեց Արդուլ-Համիլի խորին վիշտը նոյն առիթով և հաւատացրեց, որ արդէն բոլոր միջոցները ձեռք են առնուած այդ գործի խիստ քննութեան և արնառուական շարժումը անյապաղ դադարեցնելու համար: Սուլթանի անունից ստացուած հաւաստիացումները առնուեցան ի տեղեկութիւն կայսերական կառավարութեան կողմից, և յանձնարարուեց Զինօվիեին ստիպողական առաջադրութիւններ անել Միարօվիցայում շփոթ առաջացնող և ոռուաց հիւապատոսի կեանքի դէմ փորձ անող յանցաւորներին խիստ պատժելու համար անյապաղ բոլոր միջոցներ ձեռք առնելունպատակով, միենոյն ժամանակ Միարօվիցա ուղարկուեց Ուսկիւրի հիւապատոս Մաշկօվ: Ներկայումն Շէրբինային բժշկում են երեք

վէլայթների ընդհանուր-տեսուչ Խիլմի-փաշայի ուղարկած դի-  
վիզայի գեներալ-բժիշկ Յակոր և Բնելզրադի բժիշկ Սուբրօտին,  
որը գնացել է նրա մօտ սերբական թագաւորի հրամանով.  
բացի դրանից սուլթանի անձնական ցանկութեամբ Միտ-  
րօվիցա է ուղարկուած Կ. Պօլսի լաւագոյն վիրարոյժ  
Կամբօր-օլյին: Վիրաւորուածի զրութիւնը բժիշկների ա-  
սելով թէպէտ և շատ լուրջ է, վտանգ չէ սպանում նրա  
կեանքին: Ստացուող տեղեկութիւնների համաձայն՝ Յ. Դու-  
ռը յիրաւի աշխատում է սահման դնելու արնաուտների կա-  
մայականութիւններին, և յուղմունքների տեղը արդէն ուղար-  
կուած է թիւրքաց զօրքերի նշանաւոր քանակութիւն, զլխաւո-  
րապէս Փոքր Ասիայից»:

— Սօլունի ոռու հիւպատոսի զեկուցումներից. «Ան-  
ցեալ աշխան տեղի ունեցած անկարգութիւններին յաջոր-  
դեց լուռ, բայց եռանդուն գործունէութեան շրջան յեղափոխա-  
կան կօմիտեանների, որոնց բոլոր ջանքերը առաջուայ նման  
ուղղուած են՝ ազգաբնակութիւնը ամբողջապէս ապստամբեցը-  
նելու նպատակին: Դրգելով քրիստոնեաններին դէպի ակնյայտ-  
նի անհաւասար կամւ՝ կօմիտեանները յոյս ունեն առաջացնել  
Եւրոպայի կողմից միջամտութիւն իրանց օգտին: Շատ յու-  
զուած արամազգութեան մէջ են թէ տեղացի մահմեդականնե-  
րը և թէ քրիստոնեանները: Նախատեսելով կարելի բարդութիւն-  
ներ՝ իշխանութիւնները զբաղուած են ճանապարհներ ու զօ-  
րանոցներ շնորհով: Հրոսակախմբերի թիւը օրէցօր աւելանում  
է, ամբողջ շրջանում ոչ մի գիւղ չը կայ, որտեղ բոյն դրած  
չը լինի ապստամբների մի խմբակ, որին թագանում են տեղա-  
ցի քրիստոնեանները մասամբ ակամայ և մասամբ կամաւ:  
Կօմիտեանները տեղային շտապով պատրաստում են ամեն  
ինչ, որ հարկաւոր է ապստամբութեան համար, երիտա-  
սարդ քրիստոնեաններ են ժողովում իրանց խմբերի համար,  
պատրաստում են կօչիկ, զգեստ, զանազան մթերքներ և վիրակա-  
պութեան պարագաներ: Ինչ վիրաբերում է ապստամբութեան  
ծրագրին՝ զիսաւոր կէտք նրանում կազմում է հրոսակախմբերի  
լեռները քաշուելը, ազգաբնակութիւնը նոյն տեղերը քչելը և  
պարտիզանական խմբերով յարձակուելը թիւրքական զօրքերի  
վրայ: Խմբակների ընդհարումները թիւրքական զօրքերի հետ  
վերջին ժամանակներս դդալի չափերով յաճախանուում են: Դժուար  
է յուսալ, որ յեղափոխական ագիտացիան, որ այսքան տարի-  
ների ընթացքում խոր արմատներ է դցել՝ ինքն իրան դադա-  
րէր խաղաղ ճանապարհով, թէպէտև հիմք չը կայ ընդհանուր  
ապստամբութիւն սպասելու. բայց չը պէտք է աչքաթող անել,

որ հնարաւոր են միաժամանակ խռովութիւններ երեք վիլայէթների զանազան կէտերում»:

—Հեռագիր Միտրօվիցի ոռոսական հիւպատոսից. «Ալբանացիները վիչետօրն քաղաքի մօտ ժողովուելով պահանջեցին հեռացնել քրիստոնեայ զապտիաներին: Համաձայնութիւն չը ստանալով նրանք մարտի 16-ին մտան Վիչետօրն և իրանց պահապանների հսկողութեան տակ քրիստոնեայ զապտիաներին ուղարկեցին Պրիշտինա: Մարտի 17-ին նրանք պաշարեցին, բայց թիւրքական զօրքերի բացած կրակից յետ մղուեցին և ցըրուեցին: 100 մարդուց աւելի սպանուածներ ու վիրաւորուածներ կան: Ալբանացիների նոր բազմութիւններ հաւաքւում են իպեկից և ենի-հազարից»:

—Հեռագիր Ուսկիւրի ոռոսական հիւպատոսից. «Միտրօվիցի մեր հիւպատոսը վիրաւորուած է մարտի 18-ին երեկոյեան 5<sup>1/2</sup> ժամին: Տանից գուրս գալով զաւազի և ձիաւոր պահակների ուղեկցութեամբ՝ պ. Շչերբինան պատահեց ալբանացի զինուոր իրահիմին, որ ձևացնելով, իր թէ ողջունումէ նրան՝ արձակեց նրա վրայ Մատովէրի հրացան, զնողակը դիմաւ պ. Շչերբինայի ձախ կողքին և ծակելով դուրս եկաւ: Այնուհետև իրահիմը հրացան պարսկեց զաւազի վրայ և ինքն էլ վիրաւորուեց հիւպատոսին ուղեկցող զինուորներից: Իրահիմը ասում է, թէ այն պատճառով հրացան արձակեց ոռոսաց հիւպատոսի վրայ, որ կամենում էր իր վիրաւորուած ազգականի վրէժն առնել: Միտրօվիցի զինուորական բերդապահ, Սայիդ-բէյը՝ բժիշկների ուղեկցութեամբ անմիջապէս այնտեղ հասաւ և պ. Շչերբինային փոխադրեց հիւպատոսարան: Ընդհանուր վերահսկող Խիլմի-փաշան և զեներալ ադիւտանտ Նասիր-փաշան անմիջապէս հեռազրով ցաւակցութիւն յայտնեցին: Այնուհետև Խիլմի-փաշայի կարգադրութեամբ՝ վիւլայթէի ամենահմուտ վերաբոյգը յատուկ զնաց Միտրօվիցա: Բժիշկների ասելով Շչերբինայի կեանքին վտանգ չէ սպառնում»:

Այդ պայմաններում զարմանալի չէ որ շատ փափուկ է Բուլղարիաի մինիստրութեան զրութիւնը: Անազին պատմական պատասխանատւութիւն մի կողմից, միւս կողմից իրար հակասող պահանջներ մեծ պիտութիւնների և բուն ժողովրդի ու մակեդոնական արիւնակիցների: Հէնց սկզբից ծագում էր զինուորական մինիստրի զեներալ Պալբրիկօվի և մինիստր-նախադահ գործօր Դանիօվի հայեացքների մէջ տարբերութիւն, որի հետեւանքն էր գեներալ Պալբրիկօվի հրաժարականը: Ոչ ոք չէր ու-

զում ստանձնել զինուորական մինիստրի պաշտօնը ներկայ հակասական պահանջների ժամանակի եւ ահա մարտի 14-ին ազգային ժողովում Դանեօվը պաշտօնապէս հաղորդում է որ ամբողջ մինիստրութիւնը հրաժարական է տալիս...

Երկրի այդ դրութեան աւելացրէք նաև Վիէննայի „Zeit“ լրագրում Բօրիս Սարաֆովի, Մակեդոնական կոմիտետի այդ պարագլիմի, պատսախանը յիշեալ թերթի խմբագրութեան:

«Արդեօք պարտաւոր չեն մակեդոնացիները այժմ հրաժարուել իրանց յեղափոխական գործունէութիւնից, ի նկատի ունենալով որ եւրոպան պաշտպան է դուրս եկել նրանց գործին» հարցըել են Սարաֆովից:

Այդ դիմումին Աստաֆօվը պատասխանել է:

«Մենք պէտք է մեզ մատնիչներ համարէինք, եթէ զէնքը աւելի առաջ վայր զնէինք, քան տեսնէինք թէ ինչ օգուտ կը բերի մեզ եւրոպական միջամտութիւնը: Մենք շատ փաստեր ունենք թերահաւատութեամբ վերաբերուելու համար զէպի եւրոպական միջամտութիւնը. իւրաքանչիւր անգամ, երբ եւրոպան աշխատել է դիպլոմատիական ճանապարհով բորուղիք թիւրքիայում քրիստոնեաների վիճակը, այդ միջամտութեան հետեանքը եղել են միայն քրիստոնեաների նորանոր կոտորածներ և ոչ ըեփօրմեր: Հայերի հետ պատահած օրինակը դեռ թարմ է մեր յիշողութեան մէջ:»

«Մենք կարող ենք յուսալ մեր հայրենիքում տանելի կացութիւն վեյելելու միայն այն ժամանակ, երբ այնտեղ կը տեսնենք մի քանի եւրոպական զօրագնդեր»: Ապա նա յայտնում է, որ մակեդոնացիները այլ ըեփօրմներ չեն խնդրում, քան այն, որ երախաւորում էին նրանց համար թերթինի դաշնագրով:

«Թիւրքիան, —ասում է Սարաֆօվ, —չի տալիս մեզ այդ ըեփօրմները առանց եւրոպայի զինուած միջամտութեան: Ահա ինչ չու մենք պատրաստում ենք մեր իւրաւոնքները պաշտպանելու, միայն եւրոպական զինուորների ձեռքը կը համաձայնուենք յանձնել մեր զէնքը»:

Այդ մօտալուտ հրդեհին, ինչպէս երեսում է, մտադիր է մասնակցել և Անդրատանդեան մեծ հանրապետութիւնը, Միացեալ-Նահանգները: Պօլսից «Daily Chronicle»-ի թղթակիցը ի միջի այլոց հաղորդում է, թէ Հ.-Ա. Միացեալ-Նահանգների գետպան Լէլշման երկու ամսուայ ընթացքում իղուր աշխատում է սուլթանի մօտ ունկնդրութիւն ստանալ, որպէսզի յանձնի սուլթանին Հ. Ա. Մ. Ն. նախագահի ձեռագիր դիմումը, որի մէջ առաջ են ըերբուած ամերիկական պահանջները Ասիական Թիւրքիայում գտնուող միսսիօնարական դպրոցների և եկեղեցիների

մասին... Եթէ սուլթանը յատադի այսուհետեւ էլ, շատ հաւանական է, որ թիւրքական ջրերը ուղարկուեն ամերիկական գրահակիրները, ինչպէս այդ եղաւ երկու տարի առաջ...

Լ. Ա.

26 մարտի.

—Կ. Պօլսի հայոց թիւրթերը հազորդում են, որ կիլիկիակիոյ նորբնափի կաթողիկոսը մարտի 5-ին հասել է Աղանա մեծ շքով. թիւրքաց կառավարութեան կողմից Սահակ սրբազնին արտակարգ պատիւմները են ցուց տրուել:

Բերլինից խմբագրութիւնս ստացաւ հետեւալ գրութիւնը.

Պատիւ ունինք Զել խոնարհաբար տեղեկացնելու, որ մենք դիտարութիւն ունինք 1903 թ. աշնանը Բերլինում մի Հայկական Ծուցահանդէս կազմելու:

Մեր ձեռնարկութեան նպատակը որևէ քաղաքական հիմունքից միանգամայն զուրկ է: Մենք կամինք Գերմանիոյ մայրաքաղաքում հայ ազգի անցեալ և ներկայ կուլտուրան, նորա նիւթական և հոգեոր արգասեաց ընդհանուր պատկերը գերմանական հասարակութեանն ներկայացնել: Մեր ցանկութիւնն է՝ զրդել գերմանական գիտութիւնն աւելի մեծ աջողութեամբ, քան մինչև այժմ, ուսումնասիրել հայ լեզուն և պատմութիւնն և աւելի պարզ պատկերացնել մեզ հայ ազգութիւնն: Զեր աղդութեանն խաղաղ կերպով ծառայել՝ այսինքն՝ Հայաստանի և Հայերի մասին լոկ ճշմարտութիւն հանդէս դնել՝ մեր միակ ցանկութիւնն է: Թէ Զեր ազգը մի խաղաղ, հոգնորապէս զարգացած և վերին աստիճանի կուլտուրայի ընդունակ ժողովուրդ է՝ յօդուած գորա գերմանացի և եւրոպական հասարակութեան առջև համոզեցուցիչ ապացուցներ են բերելու նորա աշխատանքի պատվանդները և նորա հոգեոր կեանքի արգասիքը, հայ պատմութեան սկզբից մինչև մեր ներկան:

Ցուցահանդիսի ծրագիրը հետեւալ բաժանմունքներից կը բաղկանայ:

I. Երկրի ըերթը.

ա) Հանքեր և մետաղներ. բ) Նախտայ. գ) Բամբակ. դ) Բուրգ. ե) Մետաքս. դ) Գինի և այլ խմիչք. է) Զոր միրդ. ը) Կաթնային անտեսութիւն. թ) Ջկնեղէն:

II Արուեստ եւ ծեռագործ.

ա) Գեղակար. բ) Ոստայնանկութիւն (կապերաներ և այլն). դ) Ոսկերչութիւն:

III. Հին եւ նոր հայկական գեղարուեստ.